ՀՍՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԶԵՅԹՈՒՆԻ 1895 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Է. Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար եկեղեցին դարեր շարունակ կատարել է ազգահավաքման մեծ գործ, իրականացրել նաև աշխարհիկ իշխանության գործունեություն։ Արևմտյան Հայաստանում և Թուրքական կայսրության մյուս հայաբնակ վայրերում հայ եկեղեցին կատարում էր պետության և հայության հարաբերությունները կարգավորող մարմնի դեր։ Տեղերում գործող հայ հոգևոր առաջնորդները շատ հաճախ դրսևորում էին դիվանագիտական ճկունություն՝ կասեցնելով ժողովրդի գլխին կախված օրհասը, հաճախ էլ հայտնվում էին ժողովրդին կազմակերպողի, խրախուսողի դերում և նույնիսկ գլխավորում արևմտահայ գավառի ընդվզումները։ Գավառներում գործող հոգևորականները մեծ մասամբ դուրս էին եկել ժողովրդի ծոցից, ընդունել հոգևորականի վեղարը՝ հասարակական կյանքում առավել հաջողությամբ գործելու համար։ Արևմտահայությանն այդպիսի հոգևորականներ պարգևեց Մկրտիչ Խրիմյանի բացած հոգևոր «ժառանգավորացը» Վասպուրականի Վարագա վանքում։ Ժողովրդին անմնացորդ նվիրված գործիչների մի փաղանգ էր այդ հոգևոր վարժարանի ուսուցչական կազմը և մանավանդ շրջանավարտների խումբը։ Հետագայում այդ գործը հաջողությամբ շարունակվեց նրա սանի՝ Գարեգին Սրվանձտյանցի կողմից պատմական Հայաստանի Տարոն նահանգի ս. Կարապետ վանքում բացված մի այլ հոգևոր «ժառանգավորացում»։ Պատահական չէ, որ 1880-ականների վերջին Տարոնում, Սասնա լեռներում հայտնված հայդուկների մեծ մասը սնվել ու աճել էր այդ երկու «ժառանգավորացների» հոգևոր քուրայում։ Սակայն չպետք է կարծել, թե գավառի հոգևորականները բոլորն էլ ժողովրդին նվիրված անձնվեր գործիչներ էին։ Բավական է հիշել տխրահռչակ Պողոս Մելիքյանին՝ Վասպուրականի քուրդ բեկերի, թուրք աղաների և հայ վաշխառուների հետ գործակցող այդ հոգևորականին, որն իր արդար հատուցումն ստացավ 1896-ին, հայ վրիժառուի գնդակով։ Հար ու նման գործունեություն էին ծավալել Բրուսայի հոգևոր առաջնորդ Բարդուղիմեոս Ջամչյանը, Աղթամարի կաթողիկոս Խաչատուր Շիրոյանը, որոնց՝ հոգևոր առաջնորդի բարոյական կերպարի հարցը երկար ժամանակ քննարկման նյութ էր դարձել Կ. Պոլսի Ազգային ժողովում։ Արևմտյան Հայաստանի համարյա ողջ տարածքը ոտքով շրջագայած Գարեգին Սրվանձտյանցը պատրիարքարանին ուղղած իր զեկույցներում առաջարկում էր անցկացնել հայ եկեղեցու ռեֆորմ, բարեռորոգում։ «Ժամանակն է եկեղեցին մաքրել ապականարար հայ սրբերեն, ազգը հանել տիրացուական վիճակից և քաղաքական քայլ առնուլ»[1],—ահա Սրվանձտյանցի պահանջը։ 1880-ականների վերջերին և 1890-ականների սկզբին գավառներում գործում էին նոր գաղափարներով տոգորված եկեղեցական սերնդի ներկայացուցիչները։ Այդ պատճառով էլ նրանք հաճախակի շղթայակապ հայտնվում էին Կ. Պոլսի բանտերում (ինչպես պատահեց Պողոս Նաթանյան և Ապահունյաց Եղնիկ վարդապետների հետ) կամ, իբրև պատվավոր աքսոր, նրանցից ոմանք կանչվում էին Կ. Պոլիս (ինչպես Մկրտիչ Խրիմյանը, Գարեգին Սրվանձտյանցը և Գրիգորիս Ալեաթճյանը), նրանց արգելվում էր գործել «գավառ» անու-

1 Ն. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թ. Աղաթյանի ֆ., բ. XII, գ. 10525։

նով որակվող Արևմտյան Հայաստանում, որպեսզի օսմանյան մայրաքաղաքում դտնվեին Բ. Դռան աչալուրջ հսկողության ներքո։

Զեյթունը ևս այդ հարցում բացառություն չէր կազմում։ Այդ ըմբոստ արծվարուլնը ենթարկվում էր Կիլիկիայի կաթողիկոսական թեմին։ Տեղի կաթողիկոսների ընտրության հարցը 1870-ականներից սկսած ալեկոծում էր Աղդային ժողովի նիստերը։ Ինքնակոչ Նիկողայոսին զահաղրկելուց հետո օրինական ճանապարհով կաթողիկոս ընտրվեց Մկրտիչ Խեֆսիզյանը, որը, սակայն, չարդարացրեց ոչ ժողովրդի, ոչ էլ պատրիարքարանի հույսերը։

Այլ էր Զեյթունի հոգևորականությունը։ Զեյթունն իր շրջակա գյուղերով ապրում էր կիսանկախ կյանքով։ Այդ անկախությունը դրսևորվում էր նաև հոգևորականության ընտրության ասպարեզում։ Ժամանակակիցների վկայությամբ, գյուղերի քահանաներին ընտրում էր տվյալ գյուղի համայնքը։ Երկար ժամանակ քննարկվում էր թեկնածուի մարդկային արժանիքների հարցը։ Չափանիշը ոչ թե սուրբ գրքի իմացությունն էր, մաքրակրոնությունը, այլ՝ հայրենասիրությունը. «Զեյթունցին քահանա կձեռնադրե այնպիսի սեկը, որը ոչ թե միայն քիչ թե շատ ուսած և հին ու նոր կտակարան ծանոթ ըլլա, ոչ թե միայն իր գաղափարները գրչով կամ խոսքով հայտնելու կարող ըլլա, այլ ֆիզիկապես ալ առողջ և քաջասիրտ պետք է ըլլա։ Վերոհիշյալ ուսմունքներե զուրկ ըլլա նե, հոգ չըներ, հերիք է, որ ազգասեր, հայրենանվեր և մանավանդ պատերազմասեր ըլլա»[2]։ Անձը որոշելուց հետո քահանայացուն անցնում էր քառասնօրյա ապաշխարության շրջան, որի ընթացքում յուրացնում էր կրոնական գիտելիքները, սուրբ գրքերի իմացության այն նվազագույնը, որ անհրաժեշտ էր նրան հայ եկեղեցու ծեսերը կատարելու և անհնուրաց հովիվ լինելու համար։ Զեյթունցի Մնացական Սեմերճյանը այդ առիթով գրում էր. «Սույն խստակրոն եկեղեցական, եպիսկոպոս, վարդապետ, քահանա, տիրացու, սարկավագ, ամենքն ալ թուրքի հետ պատերազմ ծագելուն պես մեկ-մեկ առյուծ դարձած, բոլորովին զինյալ պատերազմի վայրը կդիմեն՝ սպանել և սպանվել աչքերնին առնելով»[3]։ Այդ հանգամանքը լավ գիտեին Զեյթուն անցած հնչակյան գործիչները։ Ժողովրդի վստահությունը շահելու, Զեյթունի հայտնի իշխանական տների զորակցությունն ապահովելու համար անհրաժեշտ էր ամենից առաջ հավաքագրել ժողովրդի աչքում հեղինակություն վայելող հոգևորականների։ Նրանք այդպես էլ վարվում էին։ «Մոռացված հերոսներ» և «Զեյթունն ու շրջակաները» աշխատություններում Աղասին (Կարապետ Թուր-Սարգսյան) պատմում է, որ 1892-ից սկսած հնչակյան կուսակցության շարքերն են ընդունվել մի քանի գյուղերի անվանի հոգևորականներ։ Զեյթուն մուտք գործելուց առաջ Աղասին կապ է հաստատում Մարաշի քահանա Ղևոնդ Տեր-Նահապետյանի հետ։ Այս անձնավորությունը մասնակցել էր նախակուսակցական հեղափոխական շարժումներին, հայրենասիրական գործունեության համար քանիցս բանտարկվել էր սուլթանական կառավարության կողմից, 1880-ին օծվել էր քահանա, իսկ հետագայում դարձել հնչակյան կուսակցության Մարաշի մասնաճյուղի հիմնադիր անդամներից ու ղեկավարներից մեկը[4]։ Նա կապեր էր հաստատել Զեյթունի ապստամբների հետ՝ խոստանալով Բերդուզ-Չայի ճակատամարտին օգնության հասնել 500—800 զինյալ կտրիճներով։ Սակայն նա չկատարեց իր խոստումը, որովհետև այդ ընթացքում տեղի ունեցավ Մարաշի հայության կոտորածը, իսկ Ղևոնդ քահանան այլ հայրենասերների հետ բանտ նետվեց։ Զեյթունցիներից հնչակյան կուսակցության անդամ էր Թելեմելիք գյուղի ավագ քահանա Մարտիրոս Տեր-Մարտիրոսյանը, որը, Աղասու վկայությամբ, այդ գյուղի հնչակյան մասնաճյուղի ատենապետն էր։ Այդ 70-ամյա ալեզարդ հրամանատարը մեծ հմտությամբ կարողացավ խույս տալ թուրքական հետապնդումից և Հա-

2 Զ ե յ թ ո ւ ն ց ի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, Ա մաս, Վիեննա, 1900, էջ 152։

3 Նույն տեղում, էջ 161։

4 Կ ա ր ա պ ե տ Թ ո ւ ր-Ս ա ր գ ս յ ա ն, Մոռացված հերոսներ, Բեյրութ, 1952, էջ 80։

լեպի մասնաճյուղի ուղարկած գումարը՝ 120 ոսկին, Մարաշից անվտանգ հասցրեց ապստամբության ղեկավարներին։

Սակայն 1895-ի ապստամբությանը մասնակցած հոգևորականներից ամենաուշագրավը ժամանակակիցների կողմից «վեղարավոր հերոս» անունով մեծարված Բարդուղիմեոս վարդապետ Թագագճյանն էր՝ Ֆոնուզի ս. Կարապետ վանքի վանահայրության փոխանորդը, ապա վանահայրը։ Համեմատելով ապստամբությանը նվիրված աշխատություններն ու հուշերը, ականատեսների գրառումները (Մնացական Սեմերջյան, Տեովլեթ Գևորգյան, Աղասի, Հովհաննես Ահարոնյան, Կարապետ Տեր-Հակոբյան, Մամիկոն Վարժապետյան, Սմբատ Բյուրատ, Հանրի Վիթթո) և վերջապես մեր գործընկերներ Հայկազ Պողոսյանի և Ռաֆիկ Հովհաննիսյանի արժեքավոր ընդհանրացումները՝ հնարավոր է դառնում գրել այդ խենթ խիզախության և անձնազոհ հերոսության չափանիշ հոգևորականի կյանքի ոդիսականը, որն Աղասու պատկերավոր բնութագրումով XIX դարի Ղևոնդ երեցն ու Գրիգոր Լուսավորիչն էր։ Ծնվել է Ֆոնուզում, 1850-ին։ Մկրտության անունը Մինաս էր։ Տեովլեթի վկայությամբ, նա մեծացել ու ապրել է Ֆոնուզի ս. Կարապետ վանքում, Նիկողոս եպիսկոպոսի ձեռքի տակ։ Դեռ 1878-ին սարկավագ Մինասը սարսափեցնում է Անդրունի բռնակալ Եայըճըօղլուին, որը պարտվում է հայերից, ներում խնդրում և երդվում հավատարիմ բարեկամ լինել նրանց։ 1880-ին Ֆոնուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոսը Մինաս սարկավագին ձեռնադրում է վարդապետ՝ Բարդուղիմեոս անունով։ 1890-ին վարդապետը դառնում է այդ վանքի վանահայրության փոխանորդը։ Իբրև քաղաքականապես անբարեհույս անձ՝ նույն թվին բանտարկվում է Հալեպում։ Մեկ տարուց հետո ազատվում է, և նրան տեսնում ենք վանքի վանահոր պաշտոնում։ Գործուն դեր է խաղում 1895 թ. Զեյթունի ապստամբության ողջ ընթացքում՝ Գարանլըք տերեի (Մութ ձոր) ժողովից մինչև հաշտության բանակցությունները։ Տեովլեթի արժեքավոր ուսումնասիրության մեջ ապստամբության տեղական զինվորական պետերի շարքում առանձնանում են 5 հոգի՝ Նազարեթ Չավուշ, Հաճի Մարկանյան, Փանոս Շամքեշիշյան, Փանոս Չոլագյան և Բարդուղիմեոս վարդապետ։ Բոլոր հետազոտողները և հուշագրողները բարձր են գնահատում Մութ ձորի ընդհանուր ժողովում Բարդուղիմեոսի քարոզը, որը վճռական նշանակություն ունեցավ ապստամբությունն սկսելու հարցում։ Զեյթունի հայությունը տեղյակ էր 1894 թ. Սասնո ինքնապաշտպանական մարտերին, 1895-ին կայսրության ողջ տարածքում մոլեգնող հայկական կոտորածների փաստին, այդ պատճառով էլ հայրենասեր վարդապետը իրենց գործի արդարության և հաղթանակի համար ունեցած հավատով ժողովականներին ներշնչում է առանց տարակույսի պարզել ապստամբության դրոշը, հակառակ դեպքում իրենք էլ կարժանանան նույն բախտին։ «Քիչ մնացեր է, որ կորսվի ու չնչվի հայությունը։ Հայաստանը օրըստօրե կպարպվի, յուր հարազատ որդիք և բնակիչք օտար երկիր կգաղթեն, օտար աղգերու կխառնվեն, իսկ մեջը մնացողք կհեծեն ու կփչանան։ Պատերազմինք, եղբայրք, ջարդվինք, հոգ չէ, թող ազգը ազատվի։ Այս պատերազմը անցյալ պատերազմներուն չնմանեցնենք, ասիկա շատ մեծ է և վերջինն է... կը պատվիրեմ ձեզ, զինվեցեք բոլորդ, այր, կին, ծեր ու երիտասարդ, ամուրի կամ օրիորդ, մինչև իսկ մանր տղայք։ Հրացան ունեցողը հրացան պետք է առնու, ատրճանակ ունեցողը՝ ատրճանակ, վեցհարված ունեցողը՝ վեցհարված, դաշույն ունեցողը՝ դաշույն։ Իսկ ասոնք չունեցողները թող զինվեն կացինով, հատոցով, մանգաղով, շամփուրով ու մուրճով»[5]։ Այս կոչը վճռականություն է հաղորդում նույնիսկ տատանվող ժողովականներին, և զեյթունցիները համաձայնվում են հնչակյան կուսակցության ներկայացուցիչների առաջարկին՝ պարզել ապստամբության դրոշը։ Անգնահատելի են վարդապետի ծառայությունները Զեյթունի զորանոցը գրավելու և թուրք պաշտոնեության ու զինուժի հանձնը-

5 Զեյթունցի, նշվ. աշխ., Բ մաս, Վիեննա, 1900, էջ 94։

ման գործում։ Զորանոցի թուրք հրամանատարը կտրականապես մերժում է հնչակյան գործիչներին հանձնվելու առաջարկը՝ պատճառաբանելով, որ նրանք տեղացիներ չեն, հյուրեր են, այսօր կան, վաղը՝ ոչ։ Զեյթունի իշխանական տների ներկայացուցիչներն ու ռազմական ավագանին խուսափում են թուրք զորահրամանատարի հպատակության ստորացուցիչ արարողությանը ներկա լինել, դա համարելով անխոհեմություն։ Բարդուղիմեոս վարդապետը առանց երկմտելու, խաչը՝ կրծքին, թուրը՝ ձեռքին կանգնում է հնչակյան ղեկավարների առաջ և ընդունում թուրք սպայակույտի և զինվորների հպատակության թափորը։ Թուրք պաշտոնյաների կանայք հարգանքով համբուրում են վարդապետի ձեռքը, իրենց անձն ու պատիվը վստահելով «վեղարավոր հերոսին» և անցնում են նրա թրի տակով։ Վարդապետը մասնակցում է նաև Զեյթունի շրջակա հայկական գյուղերի բնակչության պաշտպանությանը, իր 200—300 հոգիանոց զինվորների խմբով փրկում նրանց տեղի թուրքերի մոլեռանդ հարձակումներից։

Անմոռաց էջերից է Անդրունի ճակատամարտը, որին մասնակցում էին 100 զեյթունցիներ, 100 զինվոր Շիվիլիկ գյուղից և Բարդուղիմեոս վարդապետի 200 հոգիանոց խումբը։ 400 զինվորներից բաղկացած հայկական միացյալ ջոկատը շարժվեց Զեյթունից 18 ժամ հեռու գտնվող՝ 400 տնից բաղկացած Անդրուն գյուղը, որի փոքր մասը՝ թվով 150 հոգի, հայ էին և բանտարկվել էին թուրք գայմագամի ձեռքով։ Այդ հայերի փրկության համար սկսվեց ճակատամարտը։ Հայկական ուժերը բաժանվեցին երեք մասի. մեկի ղեկավարը վարդապետն էր, մյուս երկուսինը՝ Փանոս Զոլագյանը և Նշան Ենիտունյանը։ Հարձակումը սկսեց վարդապետի խումբը։ Աղասու վկայությամբ, կռվի մեջ աչքի ընկավ Բարդուղիմեոս վարդապետը, իսկ Տեռվյեթը պատմում է, որ ականատեսները զարմացած նայում էին, թե ինչպես վարդապետին ուղղած տեղատարափ գնդակները կարծես մի կախարդական ուժով չէին կպչում նրան։ Հայկական ջոկատին հաջողվեց ազատել բանտում գտնվող ողջ մնացած բոլոր հայերին։ Բարդուղիմեոս վարդապետի անմիջական մասնակցությամբ կատարվեց Ենիճե Գալեի կաթոլիկ վանքի վանահայրեր Թրիկոյի, Կարսիայի և միաբանության անդամների փրկությունը։ Մինչ այդ թուրքերը կենդանի այրել էին հայր Սալվադորին և 12 այլ անձանց։ Կաթոլիկ միաբանության ողջ մնացած անդամներին վարդապետը բերում է Զեյթուն և տեղավորում կաթոլիկ եկեղեցում։

Ապստամբության ողբերգական դրվագներից է Ֆոնուզի ճակատամարտը, երբ Ալի բեյի մեծաթիվ բանակը հարձակվեց գյուղի վրա։ Տեղացիների օրհասական ճիգերը, Հրաչյայի և Ապահի խմբերի ջանքերը, Բարդուղիմեոսի խմբի ռազմական գործողություններն ի վիճակի չեղան կանխելու աղետը։ Զեյթունից ոչ մի օգնություն չհասավ գյուղին, որովհետև մյուս կողմից Ռեմզի փաշայի բանակը հարձակվեց Զեյթունի վրա։ Զնայած Ֆոնուզը պարտվեց, բայց գյուղն իր վրա գամեց Ալի բեյի բանակի ողջ ուշադրությունը, և Զեյթունը փրկվեց երկու ճակատով կռվելու դժվար իրավիճակից։ Գյուղից նահանջող ուժերը վարդապետի խմբի հետ միասին միացան Զեյթունի պաշտպաններին։ Թուրքերը դաժան հաշվեհարդար տեսան տեղի և շրջանի գյուղերից այստեղ ապաստանած բնակիչների հետ։ Գերի վերցրին Կապանի քահանա տեր Թորոս Շահան-Քեշիշյանին, Պոնտուխի քահանա տեր Օհանեսին, Ենիճե Գալեի քահանաներ տեր Կարապետին ու տեր Գրիգորին, որոնց սպանելուց հետո կախեցին ծառերից, իսկ մի քանի քահանաների վանքի պատի վրա խաչաձև գամեցին։ Ինչպես տեսնում ենք, թուրքերի վրեժխնդրության զոհը առաջին հերթին դառնում են քահանաները, ոչ միայն կրոնական մոլեռանդության պատճառով, այլ որովհետև նրանք էին տեղերում կազմակերպում գյուղացիների դիմադրությունը։ Բարդուղիմեոս վարդապետի մասին, որպես ապստամբության ղեկավարի, վկայում է այն փաստը, որ ապստամբության հաղթանակից հետո նա մասնակցում է մեծ տերությունների հյուպատոսների և թուրք զորահրամանատարի հետ կայացած հաշտության բանակցություններին։ Հնչակյան ղեկավարներին պաշտպանելու և Զեյթունի աշխարհիկ զորա-

վարներին պատասխանատվությունից ազատելու միտումով, նա իր վրա է վերցնում ողջ պատասխանատվությունը՝ իբրև ապստամբության ղեկավար, ինչպես խնդրել, ապսպրել էին մյուսները։ Իսկ և իսկ՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց»։ Բանակցությունների ժամանակ տաքարյուն և վճռական վարդապետը բուռն առարկում է թուրքական պայմաններին, դրանց հակադրելով իր առաջարկը։ Վարդապետը գտնում էր, որ չնայած զեյթունցիների տարած հաղթանակին, նրանք կրել են մեծ վնասներ։ Անհուն դառնություն կա մեծ տերությունների հյուպատոսների երեսին շպրտած նրա ճշմարիտ խոսքերի մեջ. «Պարոն հյուպատոսներ, ես Ֆոնուզի վանահայրն եմ. այսքան զոհեր տվինք ազատության սիրույն համար, տակավին այդ անհավատների սուրին տակ պիտի մնանք ու հյուծինք։ Սիրելի Ֆոնուզս, սիրելի վանքս, թեմիս մեջ գտնված եկեղեցիներս այրեցին, հանձնվող ժողովուրդս՝ ծեր, կույսեր և մանուկներ ջարդեցին անխնա, քահանաներին անխնա ծառերեն կախեցին, 500-է ավելի կիներ ու պզտիկներ Մարաշ գերի տարած են, դեռ թուրքին անարդար և քրիստոնյայի արյունին ծարավի կառավարության տակ Ֆոնուզ պիտի երթա՞մ, բուերու ձայներ լսելու և ավերակներու վրա ողբալու»[6]։ Վարդապետի անառարկելի տոնն այնպես է վիրավորում թուրք փաշային, որ բանակցությունների ղեկավար իտալական հյուպատոս Վիթթոյի հրահանգով Բարդուղիմեոսին չի թույլատրվում մասնակցել բանակցություններին։ Դրանց ավարտից հետո վարդապետը մեկնում է Մարաշ՝ վանքի վերաշինության համար ծախքեր հայթայթելու նպատակով և խաբեությամբ ձերբակալվում։ Մի քանի ամիս հետո հյուպատոսների միջնորդությամբ ազատվում է բանտից և դարձյալ նույն նպատակով մեկնում Երուսաղեմ։ Երուսաղեմի պատրիարք թուրքամետ Հարությունն Վեհապետյանը մերժում է վարդապետի խնդրանքը՝ վանքի վերաշինության համար գումար տրամադրել. «Կանոն չէ»։ Վարդապետը խստորեն դատապարտում է այդ մերժումը։ «Դուք առնելու կանոն ունիք, տվելու կանոն չունիք»։ Ժողովրդի Ֆարազատ գավակն ու անձնվեր հովիվը մինչև վերջ մնաց իր ժողովրդի հետ, նոեց նրան բաժին ընկած ողջ տառապանքները, տարագրությունն և աքսոր Ադանայում, անսալով ժողովրդի խնդրանքին, եկեղեցու բեմից քարոզի փոխարեն նրա հոգուց դուրս պոռթկաց ցասում և անեծք մեծ տերությունների վարած նենգ քաղաքականության հասցեին։ Տառապանքի ուղիներով անցած և իմաստնացած վարդապետը այդ անեծքով հայտարարեց բոլոր ժամանակների ճշմարտությունը՝ ազգի ազատությունը միայն ու միայն տվյալ ազգի գործն է, ոչ մի այլ պետություն իր շահերից բացի, այլ շահեր չի ճանաչում։ Բարդուղիմեոս վարդապետի հայրենանվեր գործունեության վկայությունն են դեռ նրա կենդանության օրոք նրա մասին հյուսված ժողովրդական բանահյուսության նմուշները, որոնցում գովերգվում են վեղարավոր հերոսի բարոյական բարձր չափանիշները, նույնիսկ թշնամու կողմից նրա մեծ հարգանքի արժանանալը։ Զեյթունի «Տասթանում» նրա մասին հյուսված քառյակների թեմա անցնում է տասից։ Դրանք վերաբերում են նրա կատարած բոլոր նշանավոր գործերին։

Զեյթունի ապստամբությանը գործուն մասնակցություն է ունեցել նաև մի այլ հոդևորական՝ Զեյթունի առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանա Երկանյանը, որի մասին ուսումնասիրությունների մեջ կա երկակի վերաբերմունք։ Աղասու հուշագրություններում նա համեմատվում է թուրք պաշտոնյայի հետ, համարվում դավաճան, որը ցանկանում էր ծուղակի մեջ գցել իր ազգակիցներին։ Համադրելով ապստամբության մասին ստեղծված ուսումնասիրությունների մեծ մասը՝ գալիս ենք այն եզրակացության, որ Աղասու տված գնահատականը խիստ աչառու է և չի համապատասխանում իրականությանը։ Ուղղակի, որպես մարդ, նրանք երկուստեք իրար նկատմամբ հակակրանք են տածել։ Չնայած դեռ 1892-ին, իր կամքին հակառակ, Մարաշում

6 Զեյթունի պատմագիրք, Պուենոս Այրես, 1960, էջ 632։

Երկանյանը հավաքագրվում է հնչակյանների կողմից, բայց ձեռքը դնելով Ավետարանի վրա երդվում է հավատարիմ մնալ հնչակյան կուսակցության հավատամքին։ Նա հավատարիմ է մնում իր երդմանը[7]։ Զեյթունի նշանավոր տոհմերից մեկի՝ Պողոշլենց գերդաստանի շառավիղներից մեկն էր տեր Կարապետը, ղավակը նշանավոր խևիրցու, լեգենդար քահանա Դելի-Քեշիշի (խենթ քահանայի) մի տարբերակի, որ այս անգամ խև մականունն էր ստացել։ Տեր Կարապետը ուսուցչությամբ էր սկսել իր աշխատանքային գործունեությունը, ապա՝ ձեռնադրվել քահանա։ Հմուտ դիվանագետ էր, մեծ հոգեբան, արագությամբ կարողանում էր լեզու գտնել թուրք պաշտոնյաների հետ՝ ի շահ աղդային գործերի։ Տնովլեթը իր ուսումնասիրության երեք մասում էլ տարբեր առիթներով հավաստում է. «Տեր Կարապետ Երկանյան այն հանճարեղ եկեղեցականն է, որ Զեյթունի ճակատագիրը վարեց ամբողջ քառորդ դար և իր գործն քաշվելն հետո է միայն, որ զեյթունցվոց գործերն սկսան ավրվիլ։ Տեր Կարապետ կշանար լեզու գտնել կառավարության հետ և փրրկել ընդհանուր վտանգված կացությունը և բանտարկյալները, ինչպես որ հետագային ալ պիտի փրկեր այնչափ բանտարկյալներու կյանք»[8]։ Զեյթունի ավագանու ժողովի ժամանակ, երբ պետք է վճռվեր վերաբերմունքը ապստամբության նկատմամբ, տեր Կարապետը, որ բոլորի աչքում պահպանողականի համբավ ուներ, «Կզգար, թե շատ ալ դյուրին գործը մը չէ կառավարության հետ հաշտ ապրիլը»։ Նա հասկանում էր, որ չէր կարելի ժողովրդի խանդավառության վրա սառը ջուր լցնել, իսկ եթե կատարեին նահանգապետի՝ դրսեկներին (հնչակյան ղեկավարներին) հանձնելու պահանջը, նորից կսկսվեր բանտարկությունների ու աքսորի ժամանակը։ Թուրքերի հետ համաձայնություն գալու դեպքում Զեյթունը կզրկվեր իր զինական ուժից։ Ահա այդ պատճառով տեր Կարապետը դեմ չկանգնեց ապստամբության կողմնակիցներին։ Նրան մնում էր հայրենակիցներին օգնել նաև դիվանագիտական հնարքներով։

Սանդոխի ճակատամարտի ժամանակ, երբ զեյթունցիները թշնամու ծանրակշիռ հարվածներից նահանջում են, ծերունազարդ հրամանատար Կարապետ Բասիլոսյանը, որ սկզբից դեմ էր ապստամբությանը, չտանելով հայերի նահանջը, բացականչում է. «Ձիս բերեք շուտով և մի ձի էլ տեր Կարապետի համար»[9]։ Երկու Կարապետների սրընթաց արշավը այնպես է ոգևորում հայերին, որ նրանք հետ են դառնում և ջախջախիչ պարտության մատնում թշնամուն։ Այդ ճակատամարտում զոհվում է տեր Կարապետի միակ որդին՝ 17-ամյա Վարդեվառը։ Տեր Կարապետի դերը առանձնապես կարևորվում է հաշտության բանակցությունների ժամանակ, երբ նա մեծ տերությունների հյուպատոսներին և թուրք փաշային բացատրում է, որ ամբողջ ժողովուրդն է զենք վերցրել և աշխարհում չկա մի օրենք, որով արգելվի ինքնապաշտպանությունը։ Դեպքերի անմիջական մասնակից Հովհաննես Ահարոնյանը վճռականորեն հերքում է տեր Կարապետի մատնիչ կամ դավաճան լինելը և Սեմերճյանի ու Տեովլեթի նման անվերապահորեն հաստատում, որ 1895-ի ապստամբությունը չունեցավ ոչ մի դավաճան։ Դա վերաբերում է նաև տեր Կարապետին։ Մեր խորին համոզմամբ, տեր Կարապետն ու Բարդուղիմեոս վարդապետը շահեկանորեն լրացնում են իրար։ Մեկը՝ հախուռն ու տաքարյուն, մյուսը՝ հանդարտ ու դիվանագետ։

Հետաքրքիր է Կ. Պոլսի պատրիարքարանի դիրքորոշումը Զեյթունի ապըստամբության նկատմամբ։ Ազատագրական շարժումների հանդեպ բացասական վերաբերմունք ունեցող Խորեն Աշըգյան պատրիարքին Սասունի ինքնապաշտպանական մարտերից անմիջապես հետո փոխարինեց Մատթեոս

---

7 Նույն տեղում, էջ 502։

8 Գ. Տնովլեթ, Պատմություն Զեյթունի 1895-ի պատերազմներուն, տեղական բարքերով և հին դեպքերով ալ ճոխացած, մ. 1—3, Փարիզ, 1945—49, էջ 68։

9 Զեյթունի պատմագիրք, Պուենոս Այրես, 1960, էջ 377։

Իզմիրլյանը, որը Բ. Դռան նկատմամբ վարեց շատ վճռական քաղաքականություն։ «Երկաթե պատրիարքը» սուլթանից հաշիվ էր պահանջում Սասունի խաղաղ բնակչության, ապա նաև Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում ծայր առած սարսափելի կոտորածների համար, անմիջապես հարաբերությունների մեջ մտնում մեծ տերությունների դեսպանների հետ, կապ հաստատում հնչակյան կուսակցության պարագլուխների հետ։ Մեծ տերություններից հուսախաբ պատրիարքն Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղած նամակներում հայտնում էր Զեյթունի խլրտումների և հայկական կոտորածների մասին, խնդրում հայրապետին՝ դիմել ռուսական ցարին, գործի դնել հնարավոր և անհնար բոլոր միջոցները՝ հայկական բարենորոգումների խնդրին դրական լուծում տալու համար։ Զեյթունում ապաստանած, կոտորածներից մազապուրծ հայերին շտապ օգնություն և օժանդակություն հասցնելու խնդրանքով պատրիարքը համարյա ամեն օր դիմում էր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին, որին հաջողվել էր ցարական բարձր պաշտոնեության թույլտվությամբ համահայկական հանգանակություն բացել ռուսական կայսրության տարածքում։ Իզմիրլյանը հաղորդում էր կաթողիկոսին, որ կոտորածներ սանձազերծած սուլթանը իրենից պահանջել է Զեյթունի, Կաբինի, Վանի ինքնապաշտպաններին նրանց հակապետական գործունեության համար կոնդակով դատապարտել, իսկ ինքը մերժել է. «Այդպիսի կոնդակը շատ անիրավ պիտի ըլլար, ...հանիրավի թափված այդքան կոտորածների պատասխանատվությունը զոհերուն վրա թողնելու և ջարդեր կարգադրող ու գործադրողներ ի չքմեղս հանելու աշխարհի առջև»[10]։ Հետաքրքիր է, որ նման պահանջով կաթողիկոսին է դիմում Ռուսաստանի ներքին գործոց նախարարության գործերի կառավարիչ Գորեմիկինը։ Մատնացույց անելով Զեյթունի, Տիգրանակերտի, Կարինի, Վանի ինքնապաշտպանական ելույթները և դրանք որակելով իբրև հեղափոխական արարքներ, ցարական պաշտոնյան վեհափառից պահանջում է կոնդակով կովկասահայերին հորդորել կապ չպահպանել արևմտահայ հեղափոխականների հետ, կոտորածների մեղքը բարդելով նրանց վրա և ընդգծելով այդ շարժումների վնասակարությունն արևմտահայերի համար[11]։ Մի այլ դեպքում սուլթանական կառավարությունը բողոքում է ցարական դեսպանին, որ արևելահայերի՝ օգնություն և նպաստ ուղարկած գումարները առաքվում են ապստամբներին։ Պատրիարքը զգուշացնում է կաթողիկոսին, որ տեղերի ռուսական հյուպատոսները հրաժարվում են վերցնել օգնության նպատակով ուղարկած գումարները և դրանք հետ են դարձնում արևելահայերին։ Կաթողիկոսը գործադրում է իր հեղինակությունը՝ այդ գումարները տարբեր ճանապարհներով Արևմտյան Հայաստան հասցնելու համար։

1895 թ. թափուր էր մնացել Կիլիկիայի կաթողիկոսական աթոռը, և պատրիարք Իզմիրլյանի ջանքերով կաթողիկոս է ընտրվում արքեպիսկոպոս Գրիգորիս Ալեքսճյանը։ Սակայն Բ. Դուռը չի վավերացնում նրա կաթողիկոսությունը՝ որպես քաղաքականապես անբարեհույս անձի։ Երկար տևեց Կիլիկիայի կաթողիկոսական ընտրության քաշքշուկը. Ալեքսճյանի թեկնածությունը վերջնականապես մերժվեց։ Դրվելով գործելու անելանելի պայմանների մեջ՝ պատրիարք Իզմիրլյանը հրաժարական տվեց, որն անմիջապես ընդունվեր, իսկ 1896-ին Բ. Դռան հրամանով նա աքսորվեց Երուսաղեմ։ Իզմիրլյանից հետո պատրիարքական տեղապահ է ընտրվում տխրահռչակ Բարդուղիմեոս Զամչյանը, որը մինչ այդ էլ հայտնի էր իր հակաժողովրդական դիրքորոշումով։ Նորընտիր տեղապահը շտապեց հավաստիացնել սուլթանին, թե իր ամենամեծ փափագն է լինել սուլթանի հավատարիմ ծառան և կատարել նրա բոլոր հրամանները։ Այդ հաճոյակատարության համար սուլթանի կողմից նա պարգևատրվեց շքանշանով։ Սակայն մեկ շաբաթ անց, ժո-

10 22 Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 56, ց. 17, գ. 55, թ. 135։
11 Նույն տեղում, ց. 14, գ. 52, թ. 2։

ղովրդական հուզումների ազդեցության տակ, սուլթանի կամակատար պատրիարքական տեղապահը հրաժարական տվեց։ Կ. Պոլսի պատրիարք ընտրվեց Մաղաքիա Օրմանյանը՝ 1880-ականների Կարինի «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպության համակիրն ու հովանավորը։ Սակայն տարիների բեռը նրան դարձրել էր զգույշ, խոհեմ, պահպանողական գործելակերպով, ճկուն դիվանագիտական հատկություններով օժտված մի անձնավորություն։ Ժամանակակիցները նրան որակել են իբրև «գազանազուսպ»։ Օրմանյանը դիմում է բոլոր միջոցներին՝ հրաբխի վրա գտնվող արևմտահայության խլյակներին օգնելու, ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար։ Ցցանկանալով ամբաստանել իր նախորդին՝ Մատթեոս Իզմիրլյանին, հայ եկեղեցու անալառ պատմագիրը գրում է. «Երկաթե պատրիարք մակդիրով գովվեցավ, որոնք չմտածեցին, թե ավելի հատու է ճկուն պողպատը, քան անթեքելի երկաթը և թե մետաղներուն աղնվագույնը երկաթը չէ»[12]։ Կաթողիկոս Խրիմյանը ողջունեց Օրմանյանի ընտրությունը, գտնելով, որ այդ ճրգնաժամային պահին նա միակ անփոխարինելի պատրիարքն է։

Կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատը» 1895 և 1896 թթ. ընթացքում նյութեր էր հրատարակում Արևմտյան Հայաստանում սանձազերծված կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի մասին՝ իր համակրանքն արտահայտելով մարդկային արժանապատվություններ պահպանող ըմբոստների նկատմամբ։ Կաթողիկոսական դիվան և Սինոդի օրագրություններ արխիվային ֆոնդերի ուսումնասիրությունից պարզվում է, որ «Արարատում» հրապարակված նյութերն Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների հոգևոր առաջնորդների նամակներն են ուղղված վեհափառ Հայրապետին, որ ամսագրին էր տրամադրում կաթողիկոսը՝ ապագայի նկատմամբ ունեցած մեծ պատասխանատվությամբ, գալիք սերնդին հայ ժողովրդի մղձավանջային օրերին հաղորդակից դարձնելու մտահոգությամբ։

ПОЗИЦИЯ АРМЯНСКОГО ДУХОВЕНСТВА В ОТНОШЕНИИ ЗЕЙТУНСКОГО ВОССТАНИЯ В 1895 г.

Э. А. КОСТАНДЯН

Резюме

Испокон веков армянская церковь играла огромную роль в деле организации борьбы и самозащиты армянского народа. Особо следует выделить деятельность представителей духовенства, участвовавших в Зейтунском восстании, архимандрита Минаса—«Минас вардапет—герой в рясе» (так называли его современники), являвшегося настоятелем Фрнузского монастыря, и Тер-Карапета, который на протяжении тридцати лет был духовным предводителем Зейтуна, а также константинопольского патриарха Измирляна и католикоса всех армян Мкртыча Хримяна. Среди восставших были и рядовые священники, которые с оружием в руках участвовали в разных сражениях.

12 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, մաս Գ, Երուսաղեմ, 1927, էջ 5043։